Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության Զեկույց

Բիզնես Վիճակագրություն

Գործունեություն Բ.4.1
Սեմինար դասընթացներ

Առաքելությունը իրականացրել են՝

Աշու Քոնրադ, ավագ խորհրդատու
Վիբեկե Սկով Մյուլլեր, գլխավոր խորհրդատու

Հայաստան, Մարտի 19 – 23 Մարտի 2012

Վերջնական Տարբերակ

National Statistical Service
Republic of Armenia

Statistics Denmark

Հեղինակների անունները, հասցեն և էլ. փոստի հասցեն

Աշու Քոնրադ, Ավագ Խորհրդատու
Դանիայի Վիճակագրություն, Տվյալների Հավաքագրման և մեթոդաբանության բաժին
Sejrøgade 11
ԴԿ-2100 Կոպենհագեն Ø
smc@dst.dk

Վիբեկե Սկով Մյուլլեր
Դանիայի Վիճակագրություն, Տվյալների հավաքագրման և մեթոդաբանության բաժին
Sejrøgade 11
ԴԿ -2100 Կոպենհագեն Ø
vsm@dst.dk

Բովանդակությունների ցանկ

0. Ամփոփ նկարագիր 4
1. Ընդհանուր մեկանբանություններ 6
2. Գնահատում և արդյունքներ 7
2.1. Հաշվետվական ձևեր 8
2.2. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 9
2.3. Բիզնես ռեգիստր 10
3. Եզրակացություններ և առաջարկություններ 11
3.1 Հաշվետվական ձևեր 11
3.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 12
3.3 Բիզնես ռեգիստր 12
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող գործողություններ (Բ.4.2 և Բ.5) 13
4.1 Հաշվետվական ձևեր 13
4.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն 14
4.3 Բիզնես ռեգիստր ..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**4
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 15
Հավելված 2. Առաքելության ծրագիրը Մարտի 19-23, 2012..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**7
Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 19
Հավելված 4: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկման մեթոդները 20
Հավելված 5: ՀՀ ԱՎԾ -ի Բիզնես ռեգիստրի ռազմավարություն – 3-5 տարվա զարգացման ռազմավարություն (նախագիծ) 22
Հավելված 6: Հարցերի արձանագրություն, տարբերակ 2-րդ 28

Այլ հավելվածներ, որոնք պատրաստվել են սույն զեկույցի համար

Հավելված Բ4.1.7 Համակարգված հասցեների ռեգիստրի ազգային առավելությունները (Power-Point)
Հավելված Բ4.1.8 Հաշվետվական ձևերի փորձարկումը (PowerPoint)
Հավելված Բ4.1.9 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվում (Excel)
Հավելված Բ4.1.10 Վիճակագրական Բիզնես ռեգիստր ՝ տարեկան հետազոտություն
Հավելված Բ4.1.11 Վիճակագրական Բիզնես ռեգիստր՝ վերանախագծված հաշվետվական ձևեր

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԲՌ	Վիճակագրական Բիզնես Ռեգիստր
ԿԲՀ	Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն
ՍԾՄ	Ստանդարտ Ծախսերի Մոդել
ԴՎ	Դանիայի Վիճակագրություն
ՊԵԿ	Պետական Եկամուտների Կոմիտե

0. Ամփոփ նկարագիր

Բաղադրիչ Բ ներառում է հետևյալ նպատակները՝1) ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության որոշում և քանակապես սահմանում, 2) բիզնես հետազոտության հաշվետվական ձևերի բարելավում, 3) ՎԲՌ-ի վերակազմակերպման համար ռազմավարության սահմանում և ընդունում՝ առավել լավ ընդգրկմամբ և արդիականությամբ:

Սույն առաքելությունը Բաղադրիչ Բ-ի շրջանակներում իրականացվող թվով հինգերորդ առաքելությունն էր: Սույն գործունեության հիմնական նպատակներն էին՝

1. Խորհուրդներ տրամադրել ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՊԵԿ-ի աշխատակիցներին շարունակական վերապատրաստման վերաբերյալ՝ կապված իրենց համակարգում NACE դասակարգչի կիրառման հետ;
2. Ներկայացնել շնորհանդես հասցեների ռեգիստրի նպատակների վերաբերյալ;
3. Պատրաստել (նախաձեռնել) ՀՀ ԱՎԾ-ի ապագա ՎԲՌ –ի ռազմավարության նախագիծ, հնարավոր սցենարներ՝ կապված վարչական աղբյուրների, ՎԲՌ-ի հետազոտության զարգացման, հասցեների ռեգիստրի ստեղծման և այլ հարցերի հետ, որոնք պետք է մշակվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից գարնանը/ամռանը և հետագայում քննարկվեն Բ4.2 7 , Բ.5 (ուսուցողական այցելություն) և Բ.6 առաքելությունների ընթացքում;
4. Շարունակել Բ.3.2 գործընթացը ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվական ձևերի վերակազմավորման և վերանախագծման հարցերի վերաբերյալ;
5. Ներկայացնել հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդներ և մշակել փորձարկման ծրագիր ՀՀ ԱՎԾ-ի վերակազմավորված և վերանախագծված հաշվետվական ձևերի համար;
6. Վերանայել ՎԲՌ հաշվետվական ձևերը՝ դրանց օպտիմալացման նպատակով, ինչպես տվյալների անհրաժեշտության տեսանկյունից, այնպես էլ նախագծման (դիզայնի) տեսանկյունից:

Առաքելությունը իրենից ներառում էր սեմինար դասընթացներ: Գործունեության նպատակն էր վերապատրաստել համապատասխան աշխատակիցներին հաշվետվական ձևերի փորձարկման հետ կապված հարցերում, ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկման համար՝կիրառելով Ստանդարտ Ծախսերի Մոդելը և ՀՀ ԱՎԾ-ի բիզնես ռեգիստրի հետագա աշխատանքի ռազմավարության հարցում:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ բավականին լավ աշխատանքային հարաբերություններ են ստեղծվել և ընդհանուր համաձայնություն է ձեռք է բերվել հաշվետվական ձևերի փորձարկման հիմնական հասկացությունների առումով՝ հիմնական հասկացությունների վերաբերյալ: Ավելին, շարունակվում է աշխատանքը կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման հետ:

Ինչ վերաբերվում է հաշվետվական ձևերին, ապա հիմնական եզրակացությունն այն է, որ հստակ հնարավորություն կա 1) ստեղծել օգտվողի համար առավել հարմարավետ հաշվետվական ձևեր վերանախագծման միջոցով; 2) նվազեցնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը տվյալների հավաքագրման բարելավված գործընթացների

միջոցով; 3) նվազեցնել ծանրաբեռնվածությունը կապված ԿԲՀ –ի հետ և դրան առնչվող հարցաթերթիկների հետ և հիմնել փորձ և ստեղծել <<նախատիպ>> այլ ոլորտների համար:

Հաջորդ գործունեությունը (Բ.5) տեղի կունենա 2012 թվականի Ապրիլ ամսին, ինչպես նախատեսված է, և մի շարք հետևողական գործողություններ պետք է իրականացվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ սույն գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու համար:

Բ.4.2 գործունեությունը տեղի կունենա 2012 թվականի Սեպտեմբերի 3-7-ը և այն կհետևի այն բոլոր աշխատանքներին, որոնք նախաձեռնվել են Բ.4.1 գործունեության ընթացքում: Մի շարք հետևողական գործողություններ են առաջարկվում՝ սույն գործունեությանը նախապատրաստվելու համար:

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է հայ-դանիական ծրագրի շրջանակներում՝ <<**Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով**>>: Սույն ծրագրի շրջանակերում ՀՀ ԱՎԾ-ն նպատակ է հետապնդում նվազեցնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը որպես ծրագրի Բաղադրիչ Բ-ի ընդհանուր նպատակ՝ *Բիզնես ռեգիստր, Կառուցվածքային բիզնես հետազոտություններ և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն:* Սա իր մեջ ներառում է մի շարք նպատակներ՝

- Որոշել և քանակապես սահմանել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը
- Բարելավել բիզնես հետազոտությունների հաշվետվական ձևերը
- Սահմանել և ընդունել ռազմավարության ՎԲՌ-ի վերակազմավորման համար՝ առավել լավ ընդգրկմամբ և արդիականությամբ՝ հիմնականում հիմնված լինելով վարչական ռեգիստրների վրա:

Սույն առաքելությունը Բաղադրիչ Բ-ի շրջանակներում իրականացվող թվով հինգերորդ առաքելությունն էր – սեմինար դասընթացներ: Սույն գործունեության հիմնական նպատակն է վերապատրաստել համապատասխան աշխատակիցներին ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվական ձևերի վերակազմավորման և բիզնես ռեգիստրի հարցերում:

Սույն առաքելության կոնկրետ նպատակները/ակնկալվող արդյունքները հետևյալն էին, տես հավելված 1՝

- Խորհուրդներ տրամադրել ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՊԵԿ-ի աշխատակիցներին շարունակական վերապատրաստման վերաբերյալ՝ կապված իրենց համակարգում NACE դասակարգչի կիրառման հետ;
- Ներկայացնել շնորհանդես հասցեների ռեգիստրի նպատակների վերաբերյալ;
- Պատրաստել (նախաձեռնել) ՀՀ ԱՎԾ-ի ապագա ՎԲՌ –ի ռազմավարության նախագիծ, հնարավոր սցենարներ՝ կապված վարչական աղբյուրների, ՎԲՌ-ի հետազոտության մշակման, հասցեների ռեգիստրի ստեղծման և այլ հարցերի հետ, որոնք պետք է մշակվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից գարնանը/ամռանը և հետագայում քննարկվեն Բ4.2 7 , Բ.5 (ուսուցողական այցելություն) և Բ.6 առաքելությունների ընթացքում;
- Շարունակել Բ.3.2 գործընթացը ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվական ձևերի վերակազմավորման և վերանախագծման հարցերի վերաբերյալ;
- Ներկայացնել հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդներ և մշակել փորձարկման ծրագիր ՀՀ ԱՎԾ-ի վերակազմավորված և վերանախագծված հաշվետվական ձևերի համար
- Վերանայել ՎԲՌ հաշվետվական ձևերը՝ դրանց օպտիմալացման նպատակով, ինչպես տվյալների անհրաժեշտության տեսանկյունից, այնպես էլ նախագծման (դիզայնի) տեսանկյունից:

ԱՊ փորձագետները ցանկանում են արտահայտել իրենց խորհին երախտագիտությունը այն բոլոր պաշտոնյաներին և անձանց, որոնց հետ իրենք հանդիպումներ են ունեցել՝ վերջիններիս ցուցաբերած հյուրընկալության և ակտիվ աջակցության համար, ինչպես

նաև այն արժեքավոր տեղեկությունների համար, որը տրամադրվեց փորձագետներին Հայաստանում գտնվելու ընթացքում և մեծապես նպաստեց նրանց աշխատանքին:

Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը ԵՄ-ի, ՀՀ ԱՎԾ-ի կամ ԴՎ տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Գնահատում և արդյունքներ

Սույն զեկույցի դիտարկումները հիմնված են առաքելության ընթացքում սեմինարների և հանդիպումների ժամանակ ՀՀ ԱՎԾ-ի ղեկավարների և աշխատակիցների հետ տեղի ունեցած քննարկումների վրա: Բավականին լավ առաջընթաց է գրանցվել Բ.3.2 առաքելությունից ի վեր հաշվետվական ձևերի վերանախագծման հետ կապված, որը կնպաստի նվազեցնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը: Դեռևս անհրաժեշտ է հետագա աշխատանքներ տանել կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկման հետ: Բ.2 առաքելությունից ի վեր շարունակվել են գործողությունները Վիճակագրական Բիզնես Ռեգիստրի ամբողջականության և որակի վերաբերյալ: Անհրաժեշտ է շարունակել երկխոսությունները շահագրիռ կողմերի հետ, որոնց հետ գոյություն ունի արտաքին փոխկապվածություն:

Ընդհանուր առմամբ, ԱՊ փորձագետները գտնում են, որ ՀՀ ԱՎԾ-ում և սույն գործունեությանը մասնակցություն ունեցած աշխատակիցները ակնհայտորեն ցուցաբերում են դրական և կառուցողական մոտեցում և հետաքրքրվածություն այս բաղադրիչի հանդեպ, ինչպես նաև դրսևորում են լավ նախաձեռնություններ նախորդ առաքելությունից ի վեր իրականացված գործողություններում:

Սույն բաղադրիչի աշխատանքային ծրագիրը ճշտվեց և կատարվեցին որոշ ճշգրտումներ Բ.4.1. առաքելության սկզբում:

Պրն. Գագիկ Անանյանի կողմից ներկայացվեց ներկայիս կարգավիճակը, նախորդ գործունեությունից ի վեր առաջընթացը կապված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման հետ, նախագծման հարցերը, ՀՀ ԱՎԾ-ի կողմից կատարված աշխատանքները նախքան Բ.4.1 առաքելությունը, ինչպես նաև ներկայացվեց իրավիճակը կապված NACE Խմբ. 2 դասակարգիչը վարչական ռեգիստրներում ներկայացնելու հետ, ինչպես նաև Վիճակագրական Բիզնես Ռեգիստրում: Հաջողությամբ իրականացվել է աշխատանքը ՀՀ Կենտրոնական Բանկի հետ, որը վերաբերվում էր Պետական Ռեգիստրից ստացվող տվյալների ամբողջականությանը և որակին: Տվյալների տրամադրումը Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից դեռևս քննարկվում է:

2.1. Հաշվետվական ձևեր

Վերանախագծման գործընթացի ներկայիս կարգավիճակը

Լավ առաջընթաց է գրանցվել հաշվետվական ձևերի ոլորտում: Հետազոտության հարցաթերթիկների գլխավոր էջի նոր նախագիծը հաստատվել է: Բազիսային չափման մի քանի հաշվետվական ձևեր վերանախագծվել են և հաստատվել են Վիճակագրության Պետական Խորհրդի և ՀՀ Արդարադատության նախարարության կողմից և դրանք կիրառման մեջ կլինեն Ապրիլ ամսից:

- 1-ՏԳ Տնտեսական գործունեության վերաբերյալ տարեկան հետազոտություն (ինչպես նաև եռամսյակային հետազոտություն)
- 1- Առևտուր ամսեկան հետազոտություն առևտրի շրջանառության մասին
- Առևտուր և ծառայություններ 1 (բազիսային չափում այս հաշվետվական ձևի համար չի իրականացվել)

Բազիսային չափման մեջ ներառված այլ հաշվետվական ձևերի կարգավիճակը

- 1-Արտադրություն – ամսեկան հետազոտություն արդյունաբերական արտադրանքի վերաբերյալ (սպասվում է հաստատումը)
- 1–ԿՇ ամսեկան հետազոտություն շինարարական աշխատանքների վերաբերյալ (նախագիծ)
- Էներգետիկա և Կապ (հաղորդակցություն) – բովանդակությունը նույնն է, սակայն պետք է կազմվի նոր նախագիծ (դիզայն)
- Տրանսպորտ - որևէ փոփոխություն այս հաշվետվական ձևի վերաբերյալ չի կատարվի

Ինչ վերաբերվում է 11–ՀՄ տարեկան հետազոտության հիմնական միջոցների վերաբերյալ հաշվետվական ձևին, ապա այն արդիականացվել է նոր NACE ցուցանիշներով: ՀՀ ԱՎԾ քննարկումներ է ունեցել հաշվապահների հետ այս հաշվետվական ձևի վերաբերյալ: Անհրաժեշտ կլինի կատարել ծրագրային փոփոխություններ հաշվետվական ձևում որևէ փոփոխություններ կատարելու դեպքում: Հարցերի արձանագրությունը դեռևս պետք է լրացվի մակրոտնտեսական բաժնի կողմից:

ՀՀ ԱՎԾ ակնկալում է, որ նշված ցանկի բոլոր հաշվետվական ձևերը կվերանախագծվեն և կհաստատվեն մինչև սույն ծրագրի ավարտը:

Շնորհանդես և սեմինար հաշվետվական ձևերի փորձարկման վերաբերյալ ճյուղային բաժինների և Մեթոդաբանության բաժնի աշխատակիցների համար

Հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդների վերաբերյալ շնորհանդես ներկայացվեց ճյուղային բաժինների ղեկավարների և աշխատակիցների համար: Ներկայացված թեմաներից որոշ հիմնականները հետևյալն էին՝

- Տարբեր փորձարկման մեթոդներ: Փորձագետի տեսակետ, սպառողի հետ փորձարկում, նախնական փորձարկում
- Փորձարկման գործընթացը – արդյունքների վերլուծություն և ճշգրտումներ հաշվետվական ձևում
- Հաշվետվական ձևի փորձարկման համար առաջարկվող մարդկանց/ձեռնարկությունների քանակը
- Ինչպես իրականացնել վերլուծություններ և գրանցել արդյունքները:

Power Point –ի շնորհանդեսը ներառված է սույն զեկույցի Հավելված 8-ում:

Հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդների վերաբերյալ սեմինարը ներկայացվեց Մեթոդաբանության բաժնում: Ներկայացվեցին մի քանի օրինակներ, թե ինչպես պետք է իրականացնել փորձարկումը:

Բիզնես ռեգիստրի հետազոտության ուսումնասիրում և նախագծային փոփոխությունների հետ կապված առաջարկություններ

Բիզնես ռեգիստրի հետազոտությունը ուսումնասիրվեց Մեթոդաբանության և Բիզնես ռեգիստրի բաժինների հետ միասին և առաջարկվեցին հետևյալ փոփոխությունները՝

- Հարց 6. Պատասխանի տեքստային մասը պետք է մոտ տեղադրված լինի նշումների համար նախատեսված վանդակներին
- Հարցեր 10,11,12-ի վերաբերյալ անհրաժեշտ է ձևափոխել դիզայնը այնպես, որ այդ երեք կապակցված հարցերը ամբողջացված լինեն մեկ հարցի մեջ:

Առաքելության ընթացքում, պատրաստվեց վերանայված հարցաթերթիկի նախագիծը, որը ներառել էր նշված առաջարկությունները: Առկա և վերանախագծված հաշվետվական ձևերի օրինակները ներկայացված են Բ4.1.10 and Բ4.1.11 հավելվածներում:

2.2. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետազոտության արդյունքները կազմվել են և աղյուսակի տեսքով ներկայացվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Սակայն դեռևս ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը չի հաշվարկվել Ստանդարտ Ծախսերի Մոդելի կիրառմամբ: Առաքելության ընթացքում ներկայացվեց նոր ձևանմուշ, որը օգտակար կլինի բազիսային չափման հաշվարկների համար (Հավելված 4)

Ներկայացվեց մոդել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման համար (տես Հավելված 4): Այս քննարկումն ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի կողմից բարձրացվեցին մի շարք հարցեր կապված այդ մոդելի հետ:

- Ինչպես հաշվարկել ժամական աշխատավարձը
- Կարելի է արդյոք կիրառել բոպեները՝ ՀՀ դրամի փոխարեն
- Ինչպես արդիականացնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության փոփոխությունները՝ հիմնվելով բազիսային չափման վրա:

Ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները ժամական աշխատավարձի հաշվարկման հետ կապված՝

- Հաշվարկել միջին աշխատավարձը յուրաքանչյուր ձեռնարկության տեսակի համար (փոքր, միջին և մեծ)
- Հաշվարկել կշռված միջինը ձեռնարկության տվյալ չափային խմբի համար

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ կապված այլ հարցեր կքննարկվեն ուսուցողական այցելության ժամանակ (գործունեություն Բ. 5)

2.3. Բիզնես ռեգիստր

- Բ. 2 առաքելությունից ի վեր շարունակվել են հարաբերությունները արտաքին շահառուների հետ և այդ առումով գրանցվել է որոշակի առաջընթաց:

- ՀՀ Կենտրոնական բանկ

  Տարեկան Բիզնես հետազոտության ընդլայնումը մեծ հաջողություն էր: ՎԲՌ-ի ձեռնարկությունների համակցությունը ընդլայնվել է հասնելով՝ մինչև 25, 000 –ի: Միաժամանակ նոր ձեռնարկությունները և ձեռնարկատերերը, որոնք գրանցվել են 2011-ի ՎԲՌ-ի հետազոտությունից վեր կընդգրկվեն ՎԲՌ –ի համակցության մեջ, ինչպես նաև գործունեությունը դադարեցրած ձեռնարկությունները և ձեռնարկատերերը կնշվեն որպես ոչ ակտիվ ձեռնարկություններ:

- ՊԵԿ
  Քաղաքական որոշումը հարկային ռեգիստրից լրացուցիչ տվյալների տրամադրման վերաբերյալ դեռևս ընթացքի մեջ է: Դեռևս համաձայնություն ձեռք չի բերվել կապված շրջանառության և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալների տրամադրման հետ: Տվյալների որակը և ամբողջականության բացակայությունը դեռևս խնդիր է հանդիսանում:

  Մեծ աշխատանք է կատարվել ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ ներկայացնելու համար NACE դասակարգիչը ՊԵԿ-ին, ինչպես կենտրոնական մակարդակում, այնպես էլ տարածաշրջանների համար: Ցավոք, ՊԵԿ-ը չի հետևել հրահանգներին և կիրառել է միայն NACE դասակարգչի քառանիշ մակարդակը: ՀՀ ԱՎԾ-ի կողմից կձեռնարկվի նախաձեռնություն՝ առաջարկելու համար ՊԵԿ-ին փոխարինել քառանիշ մակարդակը հինգնիշ NACE դասակարգչով:

- Հասցեներ
  Հասցեների որակը դեռևս խնդիր է հանդիսանում, քանի որ ձեռնարկությունները հիմնականում չունեն իրավական պարտավորություններ տեղեկացնելու վարչական ռեգիստրներին ցանկացած տեսակի (հասցեների) փոփոխությունների վերաբերյալ:

  Ներկայացվեց շնորհանդես միասնական հասցեների ռեգիստր ունենալու առավելությունների վերաբերյալ, որին ներկա էին ինչպես արտաքին շահառուներ, այնպես էլ ճյուղային բաժինների ղեկավարներ և աշխատակիցներ: Նշվեց նման ռեգիստր ունենալու և օգտագործման առավելությունները:

- ՎԲՌ-ի տվյալների վերաօգտագործումը

  Մեթոդաբանության բաժնի համար ներկայացվեց համառոտ շնորհանդես ՎԲՌ-ի տվյալների և այլ ճյուղային բաժինների կողմից հավաքագրվող տվյալների վերաօգտագործման վերաբերյալ: Ի լրումն դրան ներկայացվեց նաև, թե ինչպես պետք է իրականացնել Word-ի փաստաթղթերում դաշտերի միաձուլումը՝ նախապես ներմուծելու համար այն տեղեկատվությունը, որը տրամադրվել է հաշվետվական ձևերում:

- Առաջիկա տարիների ռամզավարություն
  ԱՊ փորձագետները ներկայացրեցին ռազմավարության նախագիծ առաջիկա հինգ տարիների համար: Ռազմավարությունը պետք է ներկայացնի Բիզնես ռեգիստրի զարգացման համար հնարավոր սցենարների հաջորդական տեսություն: Քննարկումը միայն ընդհանուր մակարդակին էր վերաբերվում: Նպատակը այն է, որ ՀՀ ԱՎԾ-ն պետք է աշխատի տարբեր թեմաներով, ավելացնի նորերը և հեռացնի/հետաձգի մյուսները: Ռազմավարությունը պետք է ընդգրկի նպատակների նկարագրությունը և թե ինչպիսի նախաձեռնություններ պետք է ձեռնարկվեն՝ ներկայիս իրավիճակից ցանկալի իրավիճակին հասնելու համար:

  Ռազմավարության նկարագրության նախագծի առաջին տարբերակը ներկայացված է Հավելված 5-ում:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

3.1 Հաշվետվական ձևեր

Բավականին լավ առաջընթաց է գրանցվել Բ.3.2 առաքելությունից ի վեր: Բազիսային չափման մեջ ներառված հաշվետվական ձևերը կամ արդեն վերանախագծվել են, կամ էլ ընթացքի մեջ են: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության զգալի նվազեցում արդեն ձեռք կբերվի հաշվետվական ձևերի վերանախագծումից (ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի փոփոխությունից): ԱՊ փորձագետները առաջարկում են, որ վերանախագծման գործընթացը իրականացվի կենտրոնացված ձևով՝ Մեթոդաբանության բաժնի կողմից:

Անհրաժեշտ է իրականացնել հետագա աշխատանքները կապված 11–ՀՄ հիմնական միջոցների հաշվետվական ձևի վերանախագծման հետ: ԱՊ փորձագետները առաջարկում են, որ Հարցերի արձանագրությունը, որը ներկայացվել է վերջին առաքելության ընթացքում կարող է համալրվել ևս մեկ սյունակով՝ չորրորդ սյունակ, նշելով՝<<Կարելի է արդյոք այդ տվյալները ստանալ մեկ այլ աղբյուրից>> (Հավելված 6)

ԱՊ փորձագետները առաջարկում են, որ փորձարկման ընթացակարգերը պետք է իրականացվեն վերանախագծված հաշվետվական ձևերի համար՝ նախքան դրանք կներկայացվեն Վիճակագրության Պետական Խորհրդի հաստատմանը: Այն հաշվետվական ձևերը, որոնք արդեն հաստատվել են, պետք է առնվազն ենթարկվեն նախնական փորձարկման ձեռնարկությունների փոքր խմբի շրջանակներում մինչ դրանց կիրառումը ընդհանուր համակցության/ընտրանքի համար: Բիզնես ռեգիստրի

հետազոտության փոփոխությունները նույնպես պետք է փորձարկվեն՝ նախքան հետազոտության իրականացումը:

Առաջարկվում է իրականացնել հետևյալ փորձարկումները բոլոր այն հաշվետվական ձևերի համար, որոնք ենթարկվել են նախագծային զգալի փոփոխությունների՝

- Փորձագետի տեսակետ (Մեթոդաբանության բաժին և համապատասխան ճյուղային բաժիններ)
- Ներքին և արտաքին սպառողների հետ փորձարկումներ (առնվազն 5 անձ)
- Նախնական փորձարկումներ (20-50)

Առավել մանրամասները, թե ինչպես պետք է իրականացնել այս գործողությունները, ներկայացված են Բ. 4.1.8 հավելվածում:

3.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության բազիսային չափման հաշվարկների հետ կապված առաջարկվում են հետևյալ քայլերը՝

- Ստանդարտ ժամական աշխատավարձը պետք է հաշվարկվի եթե կիրառվելու է Ստանդարտ Ծախսերի Մոդելը, որպեսզի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը համադրելի լինի այլ երկրների օրինակների կամ պետական մարմինների հետ

Հաշվետվական ձևերի նախագծման փոփոխությունները արտահայտված չեն Ստանդարտ Ծախսերի Մոդելում: Միայն հաշվի է առնվում հարցերի/դաշտերի կրճատումը: Սակայն, վերանախագծված հաշվետվական ձևերը կարող են փորձարկվել բազիսային չափման մջ ներառված ձեռնարկությունների փոքր խմբի շրջանում՝ ստանալու համար ռեսպոնդենտների արձագանքը փոփոխությունների վերաբերյալ:

3.3 Բիզնես ռեգիստր

Այն թեմաները, որոնք ԱՊ փորձագետները համարում են, որ կարող են դիտարկվել որպես ռազմավարության մի մաս, առավել մանրամասնորեն ներկայացված են Հավելված 5-ում: Ստորև ներկայացված են այդ թեմաներից որոշ թեմաներ՝

Ռազմավարության տարրեր, որոնք ունեն արտաքին փոխկապակցվածություն

ԱՊ փորձագետները առաջարկում են շարունակել երկխոսությունները արտաքին շահառուների հետ:

- Հաղորդակցությունը ՊԵԿ-ի հետ կարող է ներառել՝
  - Քննարկումներ, թե ինչպես կարելի է անցում կատարել ՀՀ ԱՎԾ-ի ճշգրտված NACE խմբ.2-ի քառանիշ մակարդակից հնգանիշ մակարդակին
  - Ինչպես կարելի է լուծել որակի հետ կապված հարցերը և տվյալների տրամադրման ընդլայնման հարցերը

- ՀՀ Կենտրոնական Բանկ
  - Քննարկել նոր հետազոտությունների հնարավորությունները՝ ներառելով ձեռնարկատերերին
- Միասնական ազգային հասցեների ռեգիստրի ստեղծումը
  - ՀՀ ԱՎԾ-ն կարող է որոշել փորձնական ծրագիր
  - Գտնել գործընկերներ և ֆինանսավորում փորձնական ծրագրի իրականացման համար

Ռազմավարության տարրեր միայն ներքին սահմանափակումներով

Այս ոլորտում ԱՊ փորձագետներն առաջարկում են հետևյալ տարրերը՝

- Թվինինգ ծրագրի ընթացքում
  - Պլանավորել ՎԲՌ հաշվետվական ձևերի վերանախագծումը, ներառյալ՝ փորձարկումը (արդեն իսկ սկսվել է)
  - Վերանայել ՎԲՌ հետազոտության ընտրանքը (օպտիմալացնել ընտրությունը 25,000 ձեռնարկությունների և 10, 000 ձեռնարկատերերի մասնակցությունը)
  - Նվազեցնել ՀՀ ԱՎԾ-ի այն աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, որոնք ներգրավված են NACE խմբ. 2 դասակարգչի աշխատանքներում
  - Վերլուծել NACE խմբ. 2 բաշխումը ՎԲՌ-ում ՝տալով հինգանիշ կոդեր ձեռնարկություններին, երբ ՊԵԿ-ի կողմից վերանայված կոդերը տրամադրվում են քառանիշ մակարդակով:
  - Ուսումնասիրել հարկայինի հաշվետվական ձևերը՝ տեսնելու համար, թե արդյոք կա այնպիսի տեղեկատվություն, որը հետաքրքիր կլինի ՎԲՌ-ի համար:

- Թվինինգ ծրագրի ավարտից հետո
  - ՎԲՌ-ի հաշվետվական ձևերի որակի համար փորձնական հետազոտություն
  - Ուսումնասիրել, թե արդյոք նոր տեխնոլոգիաները կարող են անհրաժեշտ լինել
  - Ուսումնասիրել տվյալների հավաքագրման ընթացակարգերը:

4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող գործողություններ (Բ.4. 2 և Բ.5)

4.1 Հաշվետվական ձևեր

Հետևյալ գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ գործունեությունը (Բ.4.2)

1. Վերանախագծված և հաստատված հաշվետվական ձևերը, որոնք դեռևս չեն կիրառվել, հնարավորության դեպքում պետք է փորձարկվեն՝ տվյալների որակը ապահովելու համար:

2. Վերանախագծված հաշվետվական ձևերը, որոնք դեռևս չեն հաստատվել պետք է փորձարկվեն՝ կիրառելով առաջարկվող մեթոդները, նախքան դրանք հաստատման ներկայացնելը:
3. Սպառողի հետ փորձարկել վերանախագծված հաշվետվական ձևերը՝ ընտրելով ձեռնարկություններ, որոնք ներառված են եղել բազիսային չափման մեջ՝ որոշելու համար թե արդյոք փոփոխությունները նպաստել են, որպեսզի դրանք դառնան օգտվողի համար առավել հարմարավետ և օգնել են նվազեցնելու ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը:

4.2 Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն

Սույն գործողությունները պետք է իրականացվեն նախքան Բ.5 գործունեությունը

1. ՀՀ ԱՎԾ –ն պետք է լրացնի նոր ձևանմուշը բազիսային չափման տվյալներով և ուղղարկի լրացված ձևանմուշը Դանիայի Վիճակագրություն նախքան ուսուցողական այցելությունը
2. ՀՀ ԱՎԾ-ի այլ հետազոտություններ նույնպես պետք է դասակարգվեն և մուտքագրվեն այդ ձևանմուշի մեջ:

Դանիայի Վիճակագրությունը կպատասխանի մեթոդաբանության վերաբերյալ ցանկացած հարցերին և ուսուցողական այցելության ժամանակ կտրամադրի առաջարկներ հետագա քայլերի համար

4.3 Բիզնես ռեգիստր

Հետևյալ գործողությունները պետք է իրականացվեն նախքան հաջորդ գործունեությունը (Բ.4.2)

1. Քննարկել և մշակել ռազմավարություն ՎԲՌ-ի վերաբերյալ
2. Քննարկել ՎԲՌ-ի հաշվետվական ձևերի մշակումը
3. Որոշել հնարավոր փորձնական ծրագրերը
   Ա) Հասցեներ
   Բ) Տվյալների որակին առնչվող հարցեր, որոնք վերաբերվում են ՎԲՌ-ի հետազոտությանը
4. Նախապատրաստել (պլանավորել) ՊԵԿ-ի կողմից տրամադրված տվյալների փորձարկումը

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

1.Գործունեության նպատակը

Սույն գործունեության նպատակն է վերապատրաստել ՀՀ ԱՎԾ-ի համապատասխան աշխատակիցներին հաշվետվական ձևերին և բիզնես ռեգիստրի վերակազմավորմանն առնչվող հարցերում:

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

- Խորհուրդներ տրամադրել ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՊԵԿ-ի աշխատակիցներին շարունակական վերապատրաստման վերաբերյալ՝ կապված իրենց համակարգում NACE դասակարգչի կիրառման հետ;
- Ներկայացնել շնորհանդես հասցեների ռեգիստրի նպատակների վերաբերյալ;
- Պատրաստել (նախաձեռնել) ՀՀ ԱՎԾ-ի ապագա ՎԲՌ –ի ռազմավարության նախագիծ, հնարավոր սցենարներ՝ կապված վարչական աղբյուրների, ՎԲՌ-ի հետազոտության մշակման, հասցեների ռեգիստրի ստեղծման և այլ հարցերի հետ, որոնք պետք է մշակվեն ՀՀ ԱՎԾ-ի կողմից գարնանը/ամռանը և հետագայում քննարկվեն Բ4.2 7 , Բ.5 (ուսուցողական այցելություն) և Բ.6 առաքելությունների ընթացքում;
- Շարունակել Բ.3.2 գործընթացը ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվական ձևերի վերակազմավորման և վերանախագծման հարցերի վերաբերյալ;
- Ներկայացնել հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդներ և մշակել փորձարկման ծրագիր ՀՀ ԱՎԾ-ի վերակազմավորված և վերանախագծված հաշվետվական ձևերի համար
- Վերանայել ՎԲՌ հաշվետվական ձևերը՝ դրանց օպտիմալացման նպատակով, ինչպես տվյալների անհրաժեշտության տեսանկյունից, այնպես էլ նախագծման (դիզայնի) տեսանկյունից:

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ *(ՇԵ Բաղադրիչի Ղեկավար)*
Պրն. Աշոտ Անանյան, Արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ;
Գեորգի Թորոսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ
Մարիամ Պետրոսյան, Շինարարության վիճակագրության բաժնի պետ;
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ;

Վիբեկե Սկով Մյուլլեր, Դանիայի Վիճակագրության գլխավոր խորհրդատու
Աշու Քոնրադ, Դանիայի Վիճակագրության ավագ խորհրդատու

ՀՀ ԱՎԾ այլ աշխատակիցներ, որոնք մասնակցում են սույն գործունեությանը

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի պետ
Լաերտ Հարությունյան, Բիզնես Ռեգիստրի բաժնի պետ
Գարիկ Խաչատրյան, Բիզնես ռեգիստրի բաժին

Հավելված 2. ԱՊ փորձագտների հանդիպման ծրագիրը՝ 19 -23 Մարտի, 2012 թ.

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/Մանրամասնությունները
19 Մարտի, երկուշաբթի առավոտյան	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետների հետ	Ներկայիս կարգավիճակը. առաջընթացը և զարգացումները նախորդ գործունեությունից ի վեր՝ 1. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում 2. Բիզնես ռեգիստր (ռազմավարություն) 3. Հարցաթերթիկի նախագծում 4. Այլ համապատասխան զարգացումներ
20 Մարտի, երեքշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Մեթոդաբանության և ճյուղային բաժիններ	1. Մինչ այժմ ՀՀ ԱՎԾ-ի կողմից վերակազմավորված հաշվետվական ձևերը: Հնարավոր ճշգրտումների վերաբերյալ քննարկումներ: 2.Քննարկել <<Հիմնական միջոցների>> հաշվետվական ձևը՝ հիմնվելով վերանայված բովանդակության և Դանիայի Վիճակագրության <<Հաշիվների վիճակագրության>> հաշվետվական ձևի վրա (Բ 3.2 զեկույց, բաժին 4):
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում մեթոդաբանության բաժնի հետ	NACE դասակարգչի ներկայացումը ՊԵԿ-ին և ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՊԵԿ-ի աշխատակիցների վերապատրաստումը: Տեղեկություններ և քննարկումներ:
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Մեթոդաբանության և Բիզնես ռեգիստրի բաժիններ	Բիզնես ռեգիստրի հաշվետվական ձևի քննարկում՝ հաշվի առնելով. 1. Ուղեկցող հարցերի արձանագրությունը 2. Հնարավոր նոր փոփոխականներ ՊԵԿ-ի կողմից:
21 Մարտի, չորեքշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում մեթոդաբանության բաժնի հետ	Գործնական քննարկումներ ՎԲՌ-ի վերաբերյալ, ներառյալ տվյալների ներքին վերաօգտագործումը:
	ՀՀ ԱՎԾ	Սեմինար ՀՀ ԱՎԾ –ի աշխատակից ների և շահառուների	Ներկայացնել համակարգված հասցեների ռեգիստրի ազգային առավելությունները:

		համար	
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	Հաշվետվական ձևերի փորձարկման մեթոդները:
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Մեթոդաբանության բաժնի հետ	Հաջորդական փորձարկման ծրագրի մշակում վերանախագծված հաշվետվական ձևերի համար, հատկապես կենտրոնանալով բազիսային չափման մաս հանդիսացող հաշվետվական ձևերի վրա:
22 Մարտի, հինգշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի հետ	1. Թվինինգի առաջարկությունները ՎԲՌ-ի վերաբերյալ, ներառյալ՝ կոնկրետ 3-5 տարվա ռազմավարության զարգացման սցենարներ: 2. Առաջարկություններ հաշվետվական ձևերի վերաբերյալ 3. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափման պատասխանների վերլուծություններ և առաջիկա քայլերը
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Հաշվետվության պատրաստում
23 Մարտի, ուրբաթ առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Զեկույցի մշակում և եզրակացությունների պատրաստում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ Ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, քննարկումներ և առաջարկություններ: Հաջորդ առաքելության հետևանքները և ՇԵ փորձագետների համար կիրառելի աշխատանքային ծրագիրը:

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանիպումներ են տեղի ունեցել

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ *(ՇԵ Բաղադրիչի Ղեկավար)*
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի պետ
Լաերտ Հարությունյան, Բիզնես ռեգիստրի բաժնի պետ
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Աշոտ Անանյան, Արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ
Գեորգի Թորոսյան, Տրանսպորտի և կապի վիճակագրության բանի պետ
Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրութ. միջազգային համադրումների բաժնի պետ
Գարիկ Խաչատրյան, Բիզնես ռեգիստրի բաժին
Լաուրա Սարգսյան, Բիզնես ռեգիստրի բաժին
Կարինե Արամյան, Բիզնես ռեգիստրի բաժին
Ռուզաննա Շաբոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Մարիետա Ծատուրյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժին
Հասմիկ Հակոբյան, Արդյունաբերության վիճակագրության բաժին
Անահիտ Նազարյան, Սոցիալական ոլորտի վիճակագրության բաժին
Դիանա Ղարագյոզյան, Շինարարության վիճակագրության բաժին
Լուսինե Շահինյան, Շինարարության վիճակագրության բաժին
Անժելա Դաշյան, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին
Արմինե Շաբոյան, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին
Աննա Իսրաելյան, Վիճ. ծառ. աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակ. բաժին
Դիանա Անանյան, Վիճ. ծառ. աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակ. բաժին
Վարդան Արևշատյան, Գյուղատնտեսության վիճակագրության բաժին
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Մարինա Պետրոսյան, Շինարարության վիճակագրության բաժին
Անահիտ Նազարյան, Շինարարության վիճակագրության բաժին
Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Սուսան Հունանյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Լաուրա Բեյբության, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագր.բաժին
Հասմիկ Մատինյան, Ֆինանսների վիճակագրության բաժին
Վրեժ Ավետիսյան, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալության տնօրեն
Արտեմիդա Սահակովա, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալություն
Նադյա Լուիզյան, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալություն
Արփինե Ղազարյան, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալություն
Զարուհի Ավետիսյան, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալություն
Եվա Աբրահամյան, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալություն

Հավելված 4. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկման մոդելը

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հաշվարկի օրինակ

Մոդել	Նկարագիր	Հաշվարկի օրինակ (փոքր ձեռնարկությունների համար)
Հաճախականություն	Հետազոտության հաճախականությունը (տարեկան =1, եռամսյակային = 4, ամսական = 12). Տվյալ օրինակում ներկայացված է եռամսյակային հետազոտություն:	4
X		X
Տարեկան հաշվետու ձեռնարկությունների քանակը	Տարեկան հաշվետու ձեռնարկությունների քանակը (համաձայն չափի՝ փոքր, միջին, խոշոր): Տվյալ օրինակում ներկայացված են 2000 փոքր ձեռնարկություններ (քանակը կլորացված է).	2000
X		X
Ստանդարտ օգտագործված ժամանակը (րոպեներ)	Հարցաշարի լրացման համար ստանդարտ օգտագործված ժամանակը սահմանված է “սովորական արդյունավետ” ձեռնարկության համար: Ժամանակը օգտագործվում է տեղեկատվությունը հավաքագրելու և հաշվետվական ձևի մեջ մուտքագրելու համար՝ համապատասխան ձեռնարկության խմբում աշխատող որակավորված աշխատակցի կողմից:	10 min.
=		=
Տարեկան ծանրաբեռնվածությունը ժամերով	Յուրաքանչյուր ձեռնարկության չափի համար հետազոտության հարցաշարի լրացման համար օգտագործված	80.000/60= 1333

X	ընդհանուր բոպեները: Ընդհանուր տարեկան ծանրաբեռնվածությունը ժամերով ստանալու համար կարելի է այն բաժանել 60-ի:	X
Միջին ժամական աշխատավարձը (ՀՀ դրամ)	Տարեկան ծանրաբեռնվածությունը ժամերով բազմապատկվում է միջին ժամական աշխատավարձով:	120
=		=
Վարչական ծանրաբեռնվածություն (ՀՀ դրամ)	Միջին տարեկան ծանրաբեռնվածությունը ստացվում է ամփոփելով փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների արդյունքները:	160.000

Հավելված 5. ՀՀ ԱՎԾ –ի Բիզնես Ռեգիստրի ռազմավարություն – 3-5 տարիների զարգացման ռազմավարություն (նախագիծ)

1. Ռազմավարության նպատակը

Ռազմավարության նպատակն է ներկայացնել Բիզնես ռեգիստրի զարգացման համար հնարավոր սցենարների հաջորդական տեսությունը առաջիկա 3-5 տարիների համար:

2. Ընդհանուր նպատակը

Սցենարներից յուրաքանչյուրը և դրանց առնչվող նախաձեռնությունները, կարելի է ասել, որ ունեն երեք հիմնական նպատակներ՝

- Բարելավել Բիզնես ռեգիստրի տեղեկատվության ընդհանուր որակը
- Բարելավել Հայաստանյան ձեռնարկությունների ընդհանուր ընդգրկունությունը (ներառյալ անհատ ձեռնարկատերերին)
- Նպաստել ՀՀ ԱՎԾ-ի կողմից Հայաստանյան ձեռնարկությունների վրա դրված ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցմանը

3. Ռազմավարության հիմնական տարրերը

3.1. Արտաքին փոխկախվածությամբ տարրեր

Պետական Եկամուտների Կոմիտե

Ա) Շարունակել հողորդակցության գործընթացը: Բարձրացնել ՊԵԿ-ի կողմից ստացվող տեղեկատվության որակը և ամբողջականությունը

- Ծրագրել NACE խմբ.2 դասակարգչի հնգանիշ մակարդակի ներկայացումը ինչպես իրավաբանական անձանց (Ձեռնարկություններ), այնպես էլ անհատ ձեռնարկատերերի համար
- Մշակել ծրագիր հասույթի և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տվյալների (հավաստի) տրամադրման համար (մեկ ծրագիր իրավաբանական անձանց համար և մյուսը ձեռնարկատերերի համար՝ հնարավոր է իրավաբանական անձանց տեղեկատվությունը համարվի առաջնային նպատակ)
- Այնուհետև նոր տեղեկատվություն կարող է ավելանալ փոփոխականների ցանկում, որոնք տրամադրվում են ՀՀ ԱՎԾ-ին:
- Քննարկել հասցեների փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը պարտադիր դարձնելու հնարավորությունները՝ կապված անվան, հասցեի (իրավաբանական անձի/ձեռնարկատիրոջ գրանցման հասցեն և (հիմնական) գործունեության իրական հասցեն) և լուծարման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը

Բ) ՀՀ ԱՎԾ – ի գործողությունները

- Նվազեցնել ՀՀ ԱՎԾ-ի ծանրաբեռնվածությունը – համոզվեք, որ բարձր որակավորում ունեցող աշխատակիցները պետք է պատասխանեն միայն գործունեության տեսակի վերաբերյալ հատուկ/անսովոր հարցերին
  - Մշակել ծրագիր NACE խմբ. 2 դասակարգիչը տարածքային գրասենյակներում առավել մանրամասնորեն ներկայացնելու համար
  - Ուսումնասիրել կայք էջը՝ գործիքները օգտվողի համար առավել հարմարավետ դարձնելու համար, մասնավորապես որոնման ֆունկցիայի հետ կապված
  - Ուսումնասիրել մանրամասն ուղեցույցները – արդյոք հնարավոր է իրականացնել որևէ բարելավումներ
- Վերլուծել NACE խմբ. 2 դասակարգչի տարածումը ՎԲՌ-ում՝ հնգանիշ մակարդակի կոդեր տրամադրելով իրավաբանական անձանց (ձեռնարկություններին) և անհատ ձեռնարկատերերին, այն դեպքում երբ ՊԵԿ-ի կողմից վերանայված կոդերը քառանիշ մակարդակում են՝ նպատակ ունենալով ՎԲՌ-ի բոլոր ակտիվ ձեռնարկություններին և ձեռնարկատերերին տրամադրել հնգանիշ կոդեր
- Ուսումնասիրել հարկայինի հաշվետվական ձևերը՝ արդյոք որևէ տեղեկատվություն կարող է հետաքրքրություն ներկայացնել ՎԲՌ –ի համար, կամ այլ ճյուղային բաժինների համար- նպատակն է պատրաստել նոր կարիքների/ցանկությունների ցանկ՝ ապագայում ՊԵԿ-ի կողմից տվյալների տրամադրման համար

3.1.1. Ձեռնարկությունների Պետական Ռեգիստր (Արդարադատության նախարարություն)

Ա) Շարունակել հաղորդակցման գործընթացը՝ բարելավելու համար Պետական Ռեգիստրից ստացվող տվյալների որակը և ամբողջականությունը

- Քննարկել հիմնադիրի, տնօրենի, անվանման, հասցեի և լուծարման փոփոխությունների մասին տեղեկությունների տրամադրումը պարտադիր դարձնելու հնարավորությունները
- Ներգրավել Ոստիկանությանը այս թեմային առնչվող քննարկումներում, քանի որ Ոստիկանությունը մեծ դեր է խաղում այն դեպքերում, երբ ՀՀ ԱՎԾ-ն չի կարողանում հայտնաբերել որևէ ձեռնարկությանը՝տարածքային գրասենյակներում:

3.1.2. ՀՀ Կենտրոնական Բանկ

Ա) Շարունակել հաղորդակցության և համագործակցության գործընթացը: Բարձրացնել Պետական Ռեգիստրից ստացվող տեղեկատվության որակը և ամբողջականությունը Թ.Բ.-ի մեկնաբանությունը՝ սա 3.1.1 –ի կրկնությունն է, արդյոք սխալ է:

- Քննարկել ընդլայնված հետազոտությունը կրկնելու հնարավորությունները որոշակի ընդմիջումից հետո:
- Արդյոք որևէ տվյալներ ՀՀ Կենտրոնական Բանկի ռեգսիտրից կարող են հետաքրքրել ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական արտադրության համար, օրինակ նոր վիճակագրական նպատակների համար: Թ.Բ.-ի մեկնաբանությունը ՝ արդյոք իրատեսական է ստանալ տվյալներ Կենտրոնական Բանկի ռեգիստրից: Քննարկվել է արդյոք նման բան: Սա իհարկե կարող է լավ գաղափար լինել, սակայն ես չեմ հիշում, որ մենք նման բան քննարկած լինենք:

3.1.3. Հասցեների ռեգիստր (ՀՀ ԱՎԾ, Ոստիկանություն կամ Ներքին գործերի նախարարություն և այլ համապատասխան մարմիններ)

Ա) ՀՀ ԱՎԾ-ն կարող է աշխատել հասցեների ռեգիստրի ստեղծման փորձնական ծրագրի ֆինանսավորման շուրջ, որը կպարունակի պաշտոնական (և միասնական) հասցեներ:

- Որոշել փորձնական ծրագիրը, գտնել գործընկերներ և ֆինասավորում
- Փորձնական ծրագիրը պետք է ներառի ուսումնասիրություն, թե ինչպես են ներկայումս կազմված հասցեները տարբեր քաղաքապետարաններում (կամ այլ համապատասխան ոլորտներում): Այն պետք է լինի ամենայն մանրամասնությամբ՝ բացահայտելու համար բոլոր հատուկ իրավիճակները (առնվազն, բոլոր իրավիճակները պետք է դիտարկվեն այս կամ այլ կերպ), ինչպես օրինակ առանձնատները, որոնք գտնվում են փոխոցներից շատ հեռու հեռավորության վրա: Զգալի տարբերություն կարող է լինեն քաղաքների և գյուղական բնակավայրերի միջև: Իրավիճակը կարող է լինել այնպիսին, որ հասցեների ռեգիստրի ամբողջական առավելությունը ստանալու համար անհրաժեշտ կլինի իրականացնել որոշ փոփոխություններ գործող սովորական ընթացակարգում – դա կարող է լինեն կրկին համարակալում՝ ապահովելու համար, որ հնարավոր է հասցեների կոդը կցել տվյալ շրջանին: Թ.Բ.-ի մեկնաբանությունը՝ Ինձ համար վերջին նախադասությունը հասկանալի չէ:
- Անհրաժեշտ կլինի նկարագրել, թե քանի տարբեր շահառուներ են արդեն իսկ հասցեներ վարում: Արդյոք այլ մարմիններ/կառույցներ արդեն իսկ ունեն նմանօրինակ որևէ բան, որը կարող է օգտակար լինել:
- Պետք է նկարագրել կանոնները, թե ինչպես պետք է գրանցվեն հասցեները:
- Փորձնական ծրագիրը կարող է իրականացվել Երևանի որևէ փոքր տարածաշրջանի համար:

Ա) Շահառուները պետք է ներգրավված լինեն:

Բ) Ի վերջո, պետք է ընդունվի օրենք՝ ապահովելու համար ընդհանուր համաձայնություն՝ ՀՀ-ում միասնական հասցեների ռեգիստրի ստեղծման համար:

3.1.4. Դիտարկել հնարավորությունները էլեկտրոնային հաշվետվության աշխատանքներին մասնակցության համար, տես ՊԵԿ-ի << Հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման ձևաչափը >> (կայք էջ)

Նպատակը պետք է լինի նվազեցնել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը, օրինակ նախապես լրացված տվյալների միջոցով: Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացումը նաև կնվազեցնի ստացված հաշվետվական ձևերի մշակման հետ կապված աշխատանքները:

3.1.5. Համագործակցությունը տվյալների մատակարարների և սպառողների համար

Որոշ քննարկումներ պետք է համաձայնեցվեն/ներգրավեն մի շարք շահագրգիռ կողմերին:

3.2. Միայն ներքին սահմանափակումներով տարրեր

3.2.1. ՎԲՌ հետազոտություն

Ա) ՎԲՌ-ի վերանախագծման ծրագիր (Իրավաբանական անձինք և ձեռնարկատերեր)

Բ) Վիճակագրական տեղեկատվության օպտիմալացում սահմանափակ ռեսուրսների առկայությամբ (հետազոտության ընդգրկունությունը՝ 25,000 + 10,000 տարեկան ՎԲՌ հարցաթերթիկներ)

Մշակել ծրագիր՝

- Վերլուծել, թե արդյոք հնարավոր կլինի ընդգրկել ամբողջ համակցությունը (բոլոր ձեռնարկություններին և ձեռնարկատերերին) որոշակի ժամանակահատվածի ընթացքում, օրինակ՝ 10 տարի:
- Վերլուծել, թե ինչպես կարող է հավաքագրվել զուտ շահույթի և աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը այլ ճյուղային բաժինների կողմից որոշ ձեռնարկությունների (ձեռնարկատերերի) վերաբերյալ, երբ ձեռնարկությունների խումբը ներառված չի եղել ՎԲՌ-ի հետազոտության մեջ:
- Վերլուծել, թե երբ և ինչպես առավել օպտիմալ կլինի հարցում կատարել ձեռնարկությունների և ձեռնարկատերերի շրջանում, որոնք ավելի վաղ տեղեկացրել էին ՀՀ ԱՎԾ-ին, որ իրենք ակտիվ չեն, արդյոք նրանք դեռևս մնում են ոչ ակտիվ (այսինքն այն դեպքում, երբ դրանք դեռևս Պետական Ռեգիստրում գրանցված են որպես ակտիվ)
- Նոր ձեռնարկություններ և ձեռնարկատերերը ինքնաբերաբար համակցության մեջ կլինեն – իսկ որը պետք է լինին հետազոտության մեջ դրանց ներառելու չափանիշը:
- Իրականացման ծրագիր

3.2.2. ՎԲՌ-ի կատարելագործված կիրառումը վիճակագրական արտադրության գործընթացում

- Վերլուծել բարելավված ընտրանքի և բաշխման հնարավորությունները՝ օգտագործելով կատարելագործված ՎԲՌ –ը:

3.2.3. Փորձնական ուսումնասիրություններ ՎԲՌ-ի հաշվետվությունների որակի վերաբերյալ

- Նպատակն է վերլուծել արդյոք ձեռնարկություններից (ձեռնարկատերերից) ստացված տեղեկատավությունը իրականում ճիշտ է թե ոչ: Սույն վերլուծությունները պետք է բացահայտեն սխալ տեղեկատվության պատճառները և թե ինչպես պետք է գտնել ճիշտ տվյալները, օրինակ՝ համապատասխանաբար ուսուցանելով վիճակագրական տեղեկատվություններ տրամադրողներին:

3.2.4. Նոր տեխնոլոգիա ՎԲՌ –ի համակարգի համար

- Չնայած որ ռեսուրսները սահմանափակ են, այնուամենայնիվ կարելի է նկատառումները դիտարկել ապագայի համար
- Ավելի ու ավելի շատ տվյալներ են մշակվելու – ՎԲՌ-ի համակարգի կատարողականությունը պետք է մանրամասն ուսումնասիրվի և պետք է դիտարկվի, թե որը կլինի օպտիմալ ժամանակահատվածը նոր ծրագրային ապահովմանն անցնելու համար:
- Արդյոք ճյուղային բաժինների աշխատակիցների համար օգտակար կլինի ՎԲՌ-ի տեղեկատվությանը առցանց մուտք ունենալը: Իսկ ինչ կասեք տարածաշրջանային գրասենյակի աշխատակիցների համար:

3.2.5. Ուսումնասիրել տվյալների հավաքագրման գործընթացը

- Տվյալների ընդհանուր վերաօգտագործումը
- Սխալների ընդհանուր ուղղումներ
- Ցանկացած արդիականացման ընթացակարգերի պահանջները՝ մասնավորապես բավականաչափ ռեսուրսներ

Հնարավոր աղյուսակ, որը պետք է լրացվի նկարագիր կազմելու համար

#	Նպատակը	Նախաձեռնությունը	Առաջնահերթությունը	Փոխկապակցվածությունը	Մեկնարկը
1					
2					
3					

Հավելված 6 Հարցերի արձանագրություն տարբերակ 2

Հարցի արձանագրությունը **Հարցաթերթիկի անվանումը** **Ամսաթիվը**

Պատասխանի դաշտի անվանումը	Ով ունի այս տեղեկատվության կարիքը	Ինչի համար	Կարելի է արդյոք այդ տվյալները ստանալ մեկ այլ աղբյուրից